ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ·

ՔԱՂԱՔԱԿԱՆ Ի ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Սինոդի Ս· Էջմիածնի, որով յանձնարարեցաւ առնուլ զտոկոսիս վասն հնգետասան ամաց 500 ռուբլեացն կտակելոց յանուն Ս· Կարապետի վանուց Մշոյ՝ ի կտակատարաց այրի Տիկին Ոսկի Կարապետեանի Ասարխանցւոյ· Թ· 1152։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն երեցփոխի եկեղեցւոյն Նիժնինովգորոդ քաղաքի, Պ· Ղազարոսի Դաւթեան Եղեանց՝ վասն հաւատարիմ պաշտօնավարութեան նորա· Թ· 1165։

Օրհնութեան և գոհունակութեան յանուն սարկաւագուհի կոյս Հռիփսիմեայ Թադիրեան, սակս բերելոյն նորա նուէր զոսկեթել ասեղնագործ քող մի վասն հայրապետական գաւազանի· Թ· 1171։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Մարգարտի Սարգսեան՝ սակս բերելոյն նորա նուէր զոսկեթել ասեղնագործ քող մի վասն հայրապետական խաչի· Թ· 1172։

—Ցանուն Սինոդի՝ վասն յերդումն կոչելոյ զՏ· Յակոբ Ծ· վարդապետն Փափազեան, զՏ· Գէորգ Ծ· վարդապետն Ռէթիւճեան, զՏ· Յովհաննէս վարդապետն Շիրակունի և զՏ· Եղիշէ Ծ· վարդապետն Դուրեան, առ լրնդունել զասաիճան եպիսկոպոսական· Թ· 1213։

—Ցանուն Սարգիս քահանայի Շիրոյեան, որով շնորհեցաւ նմա կամիլաւկայ· Թ· 1227։

—Ցանուն Եսայի քհնյի· Շաղաթ գեղջ Սիւնեաց, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական· Թ· 1228։

—Ցանուն Պ· Ալէքսանի Առաքելեան Շուշեցւոյ, որով կարգեցաւ նա անդամ հոգաբարձութեան վերանորոգութեան վանուցն Գանձասարայ· Թ· 1229։

—Ընդհանրական յանուն հայ գաղթականութեան համայն Եւրոպիոյ (Անգլիոյ, Փրանսիոյ, Աւստրօ-Հունգարիոյ, Ռումանիոյ և Պուլկարիոյ), որով յայտարարաւ կարգումն Գեր· Գէորգ եպսկ· Ռէթիւճեան առ հովիւ և առաջնորդ նոցին· Թ· 1241։

Վկայական եպիսկոպոսութեան յանուն չորից նորապսակ եպիսկոպոսաց՝ Յակոբայ, Գէորգայ, Յովհաննիսի և Եղիշէի· Թ· 1242, 1244, 1250 և 1253։

—Ցանուն Յակոբ, Գէորգ, Յովհաննէս և Եղիշէ եպիսկոպոսաց, որով շնորհեցան նոցա պնակէք եպիսկոպոսականք· Թ· 1243, 1245, 1251, 1254։

—Ցանուն Կարապետ քահանայի Յովսէփեան եկեղեցւոյն Հայոց Գահիրէի (Եգիպտոս), որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական՝ ի պսակումն բազմամեայ պաշտօնավարութեան նորին· Թ· 1246։

—Ցանուն Մամբրէ քհնյի· Վարդանեան եկեղեցւոյն Գահիրէի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական՝ ի տրիտուր բարւոք աշխատութեան նորին սակս գաղթականաց· Թ· 1247։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն համայն ժողովրդեան Եգիպտոսի, վասն մարդասիրական ջանից նորին, ուղղելոց յօգնութիւն գաղթականաց և թշուառ ազգայնոց· Թ· 1249։

—Ցանուն Ամեն· Պատրիարքին Կ· Պոլսոյ, որով յայտարարաւ ձեռնադրութիւն երից տաճկահպատակ վարդապետաց՝ Յակոբայ, Գէորգայ և Եղիշէի յաստիճան եպիսկոպոսութեան· Թ· 1252։

—Օրհնութեան և քաջալերութեան յանուն Ներսիսեան Որբասիրաց ընկերութեան Զմիւռնիոյ· Թ· 1269։

—Յանուն Տ. Գրիգորիս վարդապետի Տ. Յակոբեան, որով արձակի նա, ըստ խնդրանաց իւրոց, ի վանահայրութենէ վանուցն Տաթեւի եւ ի փոխանորդութենէ Սիւնեաց վիճակի, եւ կարգի ի Փոխանորդ Նուխւոյ. Թ. 1273։

—Յանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Ներսէս Արքեպս.ի, որով պատուիրի տանել զհաշիւս վանահայրութեան Տաթեւի եւ զգործս փոխանորդութեան Սիւնեաց ի Տ. Գրիգորիս վարդապետէ. Թ. 1274։

Յանուն վիճ. կոնսիստորիային Արցախու, որով յայտ արարեալ կարգումն Տ. Գրիգորիս վարդապետի ի Նուխի, եւ Տ. Սահակ վարդապետի Բաղդասարեան ի վանահայր Ճալէթու՝ ցվախճան կենաց իւրոց, որպէս ինքն փափագէր. Թ. 1277։

—Յանուն վիճ. կոնսիստ. Շամախու, որով յայտ արարեալ կարգումն Տ. Թովմա վարդապետի ի վանահայր վանուցն Տաթեւի եւ ի փոխանորդութիւն վիճակին Սիւնեաց, արձակելով զնա ի վանահայրութենէ վանուցն Սաղիանու. Թ. 1283։

—Յանուն յիշեալ Կոնսիստ.ի, որով պատուիրեցաւ կարգել զԵփրեմ աբեղայն Այվազեան փակակալ վանուցն Սաղիանու. Թ. 1284։

—Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի՝ առաքումն նախահաշուոյ ծախուց Մ. Աթոռոյ, հաստատելոյ վասն յառաջիկայ 1899 ամի. Թ. 1305։

—Յանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Ներսէս արքեպս.ի, որով հաստատեցաւ ի տեսուչ Թեմակ. Հոգ. դպրանոցին Երեւանայ պ. բժիշկ Մելքոն Շահնազարեանց. Թ. 1316։

—Յանուն Կոնսիստ. Արցախու, որով թոյլ տայր թաղել ի գաւթի եկեղեցւոյն Ագուլեաց Շուշի քաղաքի զբազմամեայ հաւատարիմ երեցփոխին նոյն եկեղեցւոյ Միրզաջան Պառուստեանց, որոյ ծախսեալ է ի սեփականութենէ իւրմէ աւելի քան զվեշտասան հազար րուբլիս վասն աստուածահաճոյ գործոց եւ հաստատութեանց քաղաքին. Թ. 1317։

—Օրհնութեան յանուն Պ. Բաղդասարայ Աստուածատրեան Բաղդասարեանց, որով կարգի նա գանձապահ գանձանակի Ս. Տաճարի որ յեկեղեցին Օրհէյ քաղաքի Բեսարաբիոյ. Թ. 1321։

—Օրհնութեան յանուն Պ. Մելքոնի Խաչիկեան Արած.ի, որով կարգի նա գանձապահ գանձանակի Ս. Տաճարի որ յեկեղեցին Բէլց քաղաքի Բեսարաբիոյ. Թ. 1323։

—Յանուն Միքայէլ վարդապետի Դաւթեան Թելաւեցւոյ, որով կարգեցաւ նա յառժամանակեայ վանահայր վանուցն Հաղարծնոյ. Թ. 1332։

—Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով յանձն եղեւ ջանալ ընդ ձեռն պատշաճաւոր իշխանութեան ստանալ զկտակեալն ի հանգուցեալ Կոստանդեայ Վարշամեան գումար յօգուտ Հոգեւոր Ճեմարանի Ս. Աթոռոյ. Թ. 1334։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Հոկտ. 5. Սինոդը հրամայեց Վրաստանի եւ Իմերէթի Կոնսիստորիային, որ Բաթումում շինուելիք նոր եկեղեցու գործը թողնէ անկատար, որովհետեւ Կովկասի պ. Կառավարչապետը, որին դիմումն էր եղել նոր կառուցանելի եկեղեցւոյ համար ժողովարարութեան թոյլտուութիւն ստանալու, հրամայել է թողնել այդ խնդիրն առանց հետեւանքի։

Նոյեմբ. 7. Սրբազան Սինոդը կարգադրեց պատուիրել բոլոր Կոնսիստորիաներին, որպէս զի շուտով մանրամասն տեղեկութիւն տան, նախ՝ թէ ո՞րչափ արդիւնք է ստացւում թեմից առաջիկայ տարւոյ համար եւ թէ ի՞նչպիսի աղբիւրներից է գոյանում. երկրորդ՝ թէ որքա՞ն է Կոնսիստորիաների եւ Հոգեւոր կառավարութեանց մէջ ծառայողների եւ այն բոլոր պաշտօնեաների թիւը՝ որոնք ռոճիկ են ստանում վիճակային արդիւնքներից. որպէս զի այդ ներկայացրած հաշիւները աչքի առաջ ունենայ առաջիկայ 1899 թուի նախահաշիւը կազմելու ժամանակ։

Հոկտ. 14. Սինոդը մերժեց Քիշնեւից դիմող խնդրատուների առաջարկը, որոնք